



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.1/941-2023

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԴԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ՎԱՀԱՆ ՆԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Նարիբեկյան,

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Դեղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի (Պ-460-06.12.2022-ԱռՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները,

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2023 թվականի հունվարի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից գեկուցող) նշանակելու մասին» N 17 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Կատարող՝ Պետրոս Քացախյան

Ազգային ժողովի հետ կապերի վարչության խորհրդական՝ կառուցվածքային ստորաբաժանումներում առանձին գործառույթներ համակարգող

Հեռ. 010515686

Էլ փոստ՝ petros.qatsakhyan@gov.am

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Դեղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությունն առաջարկում է.

«Դեղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ նախագիծ) վերաբերյալ.

1. Նախագծի 1-ին հոդվածով լրացվող 57-րդ կետն առաջարկում ենք շարադրել հետևյալ խմբագրությամբ՝

«57) հսկիչ գնում՝ Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառության ոլորտում վերահսկողություն իրականացնող համապատասխան տեսչական մարմնի կողմից խախտումները բացահայտելու նպատակով կատարված գնում:»:

2. Նախագծի 2-րդ հոդվածով սահմանվում է դրույթ առ այն, որ վերահսկողության նպատակը վերահսկողության ընթացքում տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված փաստացի իրավիճակը պարզելն է, վերահսկողության ոլորտում անվտանգության և (կամ) օրենսդրության պահանջներն ապահովելը՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացվող ստուգումների, հսկիչ գնումների, ինչպես նաև վերահսկողության այլ ձևերի միջոցով:

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել, որ «Տեսչական մարմինների մասին» օրենքի 6-րդ հոդվածով սահմանված են տեսչական մարմնի նպատակը և լիազորությունները, ընդ որում՝ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ տեսչական մարմնի նպատակն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իր վերահսկողության ոլորտում անվտանգության և (կամ) օրենսդրության պահանջների պահպանման ապահովումն է, որին համապատասխան՝ տեսչական մարմինն իրականացնում է օրենքով սահմանված լիազորությունները: Հաշվի առնելով վերոգրյալը, ինչպես նաև այն հանգամանքը, որ

նախագծի 2-րդ հոդվածով, ըստ էության, որևէ նոր կարգավորում չի սահմանվում, իսկ գործող օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասն իր մեջ արդեն իսկ ներառում է տեսչական մարմնի կողմից դեղերի շրջանառության ոլորտում իրականացվող բոլոր վերահսկողական գործառույթները (այդ թվում՝ և նախագծով շարադրվող հիմքերը)՝ կարծում ենք, որ նախագծի 2-րդ հոդվածի անհրաժեշտությունը բացակայում է, ուստի առաջարկում ենք այն առհասարակ հանել նախագծից:

3. Նախագծի 3-րդ հոդվածով սահմանվում է դրույթ առ այն, որ տեսչական մարմնի կողմից հսկիչ գնում իրականացվում է վերահսկողության ընթացքում, օրենքով սահմանված դեպքերում և կարգով, ինչպես նաև նախատեսվում են հիմքեր՝ հսկիչ գնում իրականացնելու համար, մասնավորապես՝ սահմանվում է, որ հսկիչ գնում իրականացվում է տեսչական մարմնի կողմից իրականացվող վարչական վարույթի կամ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով նախատեսված ստուգումների ընթացքում առաջացած անհրաժեշտության հիման վրա, տեսչական մարմին ներկայացվող տեղեկատվության (այդ թվում՝ երրորդ անձից ստացված) հիման վրա, տեսչական մարմնի կողմից նախկինում իրականացված վերահսկողության արդյունքների տվյալների հիման վրա իրականացված վերլուծությունների արդյունքում, իսկ հսկիչ գնման արդյունքում տնտեսավարող սուբյեկտի մոտ բացահայտված խախտումները կարող են հիմք հանդիսանալ ստուգում իրականացնելու համար:

Վերոգրյալի վերաբերյալ հարկ է նշել, որ սահմանված ձևակերպումները բավականին լայն են և հնարավորություն են տալիս տեսչական մարմնին առհասարակ օրենքով իրեն վերապահված ցանկացած գործառույթ իրականացնելիս, ինչպես նաև տեղեկատվություն ստանալիս կատարել հսկիչ գնում, ինչը, կարծում ենք, խնդրահարույց է և գործնականում չարաշահումների տեղիք կարող է տալ: Վերոգրյալից զատ, հարկ է նշել, որ օրենքով հսկիչ գնում իրականացնելու կոնկրետ դեպքեր չեն սահմանվում, նույնը վերաբերում է նաև հսկիչ գնում իրականացնելու կարգին, մասնավորապես՝ նախագծով կառավարությունն է լիազորվում սահմանելու հսկիչ գնում իրականացնելու կարգ, ուստի նախագծով սահմանվող ձևակերպումը վերանայման կարիք ունի՝ իրավական որոշակիությունն ապահովելու նպատակով: Խնդրահարույց է նաև տեսչական մարմնի կողմից նախկինում իրականացված վերահսկողության արդյունքների տվյալների հիման վրա իրականացված վերլուծությունների արդյունքում հսկիչ գնում իրականացնելու հնարավորության սահմանումը, քանի որ սահմանվող կարգավորման արդյունքում վերլուծության ցանկացած արդյունք կարող է հիմք հանդիսանալ հսկիչ գնում իրականացնելու համար, ինչը հակասում է իրավական որոշակիության սկզբունքին:

Միաժամանակ՝ սահմանվող կարգավորումների արդյունքում ստացվում է, որ տեսչական մարմինն իրականացվող ստուգման արդյունքում կարող է իրականացնել հսկիչ գնում, որի արդյունքում տնտեսավարող սուբյեկտի մոտ բացահայտված խախտումները կարող են հիմք հանդիսանալ ևս մեկ անգամ ստուգում իրականացնելու համար, ինչը հակասում է «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով սահմանված սկզբունքներին, որոնցով արդեն իսկ հստակ նախատեսված են ստուգման հիմքերը, հաճախականությունը, ինչպես նաև օրենսդրի կողմից սահմանված են կրկնակի ստուգում և վերստուգում իրականացնելու դեպքերը:

Ամփոփելով վերոգրյալը՝ իրավական որոշակիությունն ապահովելու, գործնականում հնարավոր տարընթերցումներից և չարաշահումներից խուսափելու նպատակով՝ առաջարկում ենք նախագծով սահմանել հսկիչ գնում իրականացնելու հստակ դեպքեր և հիմքեր՝ նվազագույնի հասցնելով տեսչական մարմնի կողմից հայեցողական որոշումներ կայացնելու հնարավորությունը:

Այնուամենայնիվ, նախագծի 3-րդ հոդվածով լրացվող 29.1-ին հոդվածի՝

1) ամբողջ տեքստում «առողջապահության ոլորտում» բառերն առաջարկում ենք փոխարինել «դեղերի շրջանառության ոլորտում» բառերով.

2) 1-ին մասում «օրենքով սահմանված դեպքերում և կարգով» բառերն առաջարկում ենք փոխարինել «Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված կարգով» բառերով:

4. Նախագծի 4-րդ հոդվածով օրենքի 24-րդ հոդվածում լրացվող 15-րդ մասով նախատեսվում է, որ դեղերի մեծածախ իրացման լիցենզիաները, բացի «Լիցենզավորման մասին» օրենքով նախատեսված դեպքերի, կասեցվում են սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջները մեկ տարվա ընթացքում կրկին խախտելու դեպքում՝ երկամսյա ժամկետով:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի (այսուհետ՝ ՎԻՎՕ) 23-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետի համաձայն՝ վարչական իրավախախտումներ կատարելու համար, ի թիվս այլնի, կարող է կիրառվել նաև «տնտեսական գործունեության կասեցում» վարչական տույժը: ՎԻՎՕ-ի 24-րդ հոդվածի համաձայն՝ տուգանային միավորը, առարկաները հատուցմամբ վերցնելը և բռնագրավումը կարող են կիրառվել ինչպես իբրև հիմնական, այնպես էլ իբրև լրացուցիչ վարչական տույժեր. սույն օրենսգրքի 23-րդ հոդվածի առաջին մասում թվարկված մյուս վարչական տույժերը կարող են կիրառվել միայն որպես հիմնական տույժեր: Մեկ վարչական իրավախախտման համար կարող է նշանակվել հիմնական կամ հիմնական ու լրացուցիչ տույժ: ՎԻՎՕ-ի 47.3-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված է ՎԻՎՕ-ի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված «տուգանք» հիմնական վարչական տույժը կիրառել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի) կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված կամ օրենքի խախտմամբ դեղեր ներմուծելու կամ արտադրելու կամ պահպանելու կամ բաշխելու կամ իրացնելու կամ կիրառելու համար:

Վերոգրյալից ակնհայտ է դառնում, որ նախագծով նախատեսված կարգավորման պարագայում տնտեսավարողի նկատմամբ կիրառվելու են միաժամանակ ՎԻՎՕ-ի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 8-րդ կետերով նախատեսված հիմնական վարչական տույժերը, այսինքն՝ անձը նույն արարքի համար կրելու է կրկնակի պատասխանատվություն, ինչը չի բխում ՎԻՎՕ-ի 24-րդ հոդվածով նախատեսված կարգավորումներից: ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Ոչ ոք չի կարող կրկին անգամ դատվել նույն արարքի համար»: Այս՝ «ne bis in idem» սկզբունքն ամրագրված է ոչ միայն ՀՀ Սահմանադրությամբ, այլև «Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին» միջազգային դաշնագրի 14-րդ հոդվածի 7-րդ կետով և «Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի» 7-րդ արձանագրության 4-րդ հոդվածով, ընդ որում՝ լինելով ինքնավար տերմին, «դատվել» եզրույթը մեկնաբանվում է ոչ միայն քրեական, այլև որպես

ցանկացած տեսակի պատասխանատվություն: Ի թիվս այլնի՝ նշված սկզբունքը հստակ ամրագրվել է նաև սահմանադրական արդարադատության շրջանակներում (ՍԴՈ-1139) և ՄԻԵԴ նախադեպային իրավունքում: Նման մեկնաբանումը բխում է նաև ՀՀ Սահմանադրության 81-րդ հոդվածի 1-ին մասից, որի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ Սահմանադրությունում ամրագրված դրույթները մեկնաբանելիս հաշվի է առնվում Հայաստանի Հանրապետության վավերացրած՝ մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային պայմանագրերի հիման վրա գործող մարմինների պրակտիկան»: Հենց այս հոդվածի և դրա մեկնաբանման լույսի ներքո էլ ՎԻՎՕ-ի 24-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ մեկ վարչական իրավախախտման համար կարող է նշանակվել հիմնական կամ հիմնական ու լրացուցիչ տույժ:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ նախագծի 4-րդ հոդվածով օրենքի 24-րդ հոդվածում լրացվող 15-րդ մասը խնդրահարույց է ՀՀ Սահմանադրության 68-րդ հոդվածի 1-ին մասի և ՎԻՎՕ-ի 24-րդ հոդվածի 2-րդ պարբերության տեսանկյունից, ուստի առաջարկվող կարգավորումը վերանայման կարիք ունի: Վերոգրյալը վերաբերում է նաև նախագծի 4-րդ հոդվածով օրենքի 24-րդ հոդվածում լրացվող 16-րդ մասին և նախագծի 5-րդ հոդվածին:

5. Նկատի ունենալով, որ նախագծի ընդունմամբ պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանալու ընդունել նաև այլ ենթաօրենսդրական ակտեր, ուստի անհրաժեշտ է նախագծում նախատեսել անցումային դրույթներ՝ դրանցում նախատեսելով համապատասխան մարմնի կողմից ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտերի ընդունման նախատեսվող ժամկետները՝ հաշվի առնելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետի պահանջներից:

«Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածից առաջարկում ենք հանել «բացառությամբ» բառը՝ հաշվի առնելով, որ վերոնշյալ օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասում (նախադասության սկզբում) արդեն իսկ «բացառությամբ» բառը նշված է և նախադասության մեջ կրկին անգամ նշելը կարող է առաջացնել տարրընթերցման խնդիր:



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 17 – Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
Մ Ա Ս Ի Ն

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝

Հայաստանի Հանրապետության տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավարի պարտականությունները կատարող Արմեն Դանիելյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում «Դեղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն և լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-460-06.12.2022-ԱՆՀ-011/0) քննարկելիս՝ Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից գեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ

Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երեւան

11.01.2023
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

ՆԱԽԱԳԻԾ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

«ԴԵՂԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Դեղերի մասին» Հայաստանի Հանրապետության 2016 թվականի մայիսի 17-ի ՀՕ-86-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 57-րդ կետով.

«57) հսկիչ գնում՝ Հայաստանի Հանրապետությունում դեղերի շրջանառության ոլորտում վերահսկողություն իրականացնող առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից խախտումները բացահայտելու նպատակով կատարված գնում:»:

Հոդված 2. Օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր նախադասությամբ.

« Վերահսկողության նպատակը՝ վերահսկողության ընթացքում տնտեսավարող սուբյեկտի գործունեության հետ կապված փաստացի իրավիճակը պարզելն է, վերահսկողության ոլորտում անվտանգության և (կամ) օրենսդրության պահանջներն ապահովելը՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացվող ստուգումների, հսկիչ գնումների, ինչպես նաև վերահսկողության այլ ձևերի միջոցով:»:

Հոդված 3. Օրենքը լրացնել 29.1-ին հոդվածով.

«Հոդված 29.1. Հսկիչ գնումների իրականացումը

1. Առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից հսկիչ գնում է իրականացվում վերահսկողության ընթացքում, այդ թվում՝ երրորդ անձ ներգրավելու միջոցով, օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

2. Առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից հսկիչ գնում իրականացվում է՝

1) առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից իրականացվող վարչական վարույթի կամ «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքով նախատեսված ստուգումների ընթացքում առաջացած անհրաժեշտության հիման վրա,

2) առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնին ներկայացվող տեղեկատվության (այդ թվում՝ երրորդ անձից ստացված) հիման վրա,

3) առողջապահության ոլորտում վերահսկողություն իրականացնող տեսչական մարմնի կողմից նախկինում իրականացված վերահսկողության արդյունքների տվյալների հիման վրա իրականացված վերլուծությունների արդյունքում:

3. Հսկիչ գնման արդյունքում տնտեսավարող սուբյեկտի մոտ բացահայտված խախտումները կարող են հիմք հանդիսանալ ստուգում իրականացնելու համար:

4. Հսկիչ գնման իրականացման կարգը սահմանում է կառավարությունը:»:

Հոդված 4. Օրենքի 24-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ և 16-րդ մասերով.

«15. Դեղերի մեծածախ իրացման լիցենզիաները, բացի «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի, կասեցվում են սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջները մեկ տարվա ընթացքում կրկին խախտելու դեպքում՝ երկամսյա ժամկետով:

16. Սույն հոդվածի 15-րդ մասով նախատեսված կասեցման ժամկետի ավարտից հետո, մեկ տարվա ընթացքում սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջները կրկին խախտելու դեպքում լիցենզիաները դադարեցվում են լիցենզավորող մարմնի կողմից:»:

Հոդված 5. Օրենքի 25-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 15-րդ և 16-րդ մասերով.

«15. Դեղատնային գործունեության լիցենզիաները, բացի «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերից, կասեցվում են սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջները մեկ տարվա ընթացքում կրկին խախտելու դեպքում՝ երկամսյա ժամկետով:

16. Սույն հոդվածի 15-րդ մասով նախատեսված կասեցման ժամկետի ավարտից հետո մեկ տարվա ընթացքում սույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին և 23-րդ հոդվածի 2-րդ մասերով նախատեսված պահանջները կրկին խախտելու դեպքում լիցենզիաները դադարեցվում են լիցենզավորող մարմնի կողմից:»:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-460՝-06.12.2022-ԱՆՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» 2000 թվականի մայիսի 17-ի ՀՕ-60 օրենքի 3-րդ հոդվածի 3-րդ մասի «Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության» բառերը փոխարինել «բացառությամբ Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի» բառերով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-460՝-06.12.2022-ԱՆՀ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌԵՎՏՐԻ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ
ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հայաստանի Հանրապետության առևտրի և ծառայությունների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 9-րդ հոդվածի 11-րդ մասում «վերադարձման» բառից հետո լրացնել «՝ բացառությամբ օրենսդրությամբ սահմանված դեպքերի» բառերը:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-460³-06.12.2022-ԱռՀ-011/0

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ**

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ 1985 թվականի դեկտեմբերի 6-ի Հայաստանի Հանրապետության օրենսգիրքի (այսուհետ Օրենսգիրք) 47.3-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

1. Հայաստանի Հանրապետությունում չգրանցված (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված դեպքերի) կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված կամ օրենքի խախտմամբ դեղեր ներմուծելը կամ արտադրելը կամ պահպանելը կամ բաշխելը կամ իրացնելը՝

առաջացնում է տուգանքի նշանակում՝ յուրաքանչյուր անվանմամբ դեղի՝

1) մինչև 5 դեղի փաթեթի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով.

2) 5-ից ավելի դեղի փաթեթի դեպքում՝ սահմանված նվազագույն աշխատավարձի երկուհազարապատիկի չափով:

Հոդված 2. Օրենսգիրքի 47.3-րդ հոդվածի 5-րդ մասի՝ «տուգանքի նշանակում» բառերից հետո լրացնել «յուրաքանչյուր անվանմամբ դեղի դեպքում» բառերը:

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Դեղերի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին օրենքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության առևտրի և ծառայությունների մասին» օրենքում լրացում կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում

Ֆոֆոխություն և լրացում կատարելու մասին» օրենքների նախագծերի փաթեթի ընդունման անհրաժեշտության

1. Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Հաշվի առնելով այն, որ դեղը որպես ապրանք ունի այլ ապրանքներից տարբերվող առանձնահատկություններ, դեղերի շրջանառության ոլորտը առանձնահատուկ և խիստ կարգավորման ենթարկելու նպատակով այդ ապրանքի վերաբերյալ ընդունվել և գործում է առանձին օրենք: Նշվածով պայմանավորված՝ անհրաժեշտ է նաև ոլորտում գործող օրենսդրական պահանջների կատարման նկատմամբ ճկուն և գործուն վերահսկողական մեխանիզմների առկայություն: Մյուս կողմից, ներկայումս գործող «Դեղերի մասին» օրենքով հնարավոր չէ վերահսկել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված կամ գրանցումն օրենքով սահմանված կարգով կասեցված կամ օրենքի խախտմամբ կեղծ դեղեր իրացնելու, դեղանյութերը, դեղաբուսական հումքը, հետազոտվող դեղագործական արտադրանքը օրենքի խախտմամբ իրացնելու, դեղատներից իրացման կամ բաց թողնման ենթակա հիմնական դեղերի ցանկին համապատասխան նվազագույն տեսականի չապահովելու, ոչ դեղագիտական խորհրդատվություն տրամադրելու, առևտրի սրահներում, սպասարահներում պիտանիության ժամկետն անցած դեղեր պահելու, դեղատներում կաթիլաներարկման լուծույթներ պատրաստելու, դեղատոմսով բաց թողնվող դեղերն առանց դեղատոմսի իրացնելու, դեղատանը պատրաստված դեղերը առանց պիտանիության ժամկետի նշման բաց թողնելու, օրենքով նախատեսված կարգի խախտմամբ առանց հայերեն ներդիր-թերթիկի դեղերի իրացման, դեղատոմսով բաց թողնվող դեղի՝ դեղատանը առկա նույն ակտիվ բաղադրատարրը պարունակող նույն դեղաչափով և դեղաձևով փոխադարձաբար փոխարինելի բոլոր դեղերի վերաբերյալ սպառիչ տեղեկատվություն ներկայացնելու խախտումները:

Նախագիծը մշակվել է նաև հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021 թվականից սկսեց գործել նոր Քրեական օրենսգիրքը, որտեղ կան նորամուծություններ բնակչության առողջության դեմ ուղղված հանցագործությունների գլուխներում:

Նորամուծությունն այն է, որ ավելացել են քրեական պատասխանատվության դրույթներ (հոդվածներ 408,409,410,411) հետևյալ դեպքերում՝ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքերի, օժանդակ նյութերի, բժշկական արտադրատեսակների կամ հետազոտվող դեղագործական արտադրանքների ապօրինի շրջանառություն, իրացման նպատակով կեղծ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքերի, օժանդակ նյութերի, բժշկական արտադրատեսակների կամ հետազոտվող դեղագործական արտադրանքների շրջանառության կամ դրանք իրացնել, կեղծ դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքերի, օժանդակ նյութերի, բժշկական արտադրատեսակների կամ հետազոտվող դեղագործական արտադրանքների ինքնությունը հավաստող կեղծ փաստաթղթեր պատրաստելը կամ օգտագործելը, դեղերի, դեղանյութերի, դեղաբուսական հումքերի, օժանդակ նյութերի, բժշկական արտադրատեսակների կամ հետազոտվող դեղագործական արտադրանքների ինքնությունը հավաստող իրական փաստաթղթերի ապօրինի շրջանառությունը:

Ելնելով վերը նշվածներից նախագծով առաջարկվում է «Դեղերի մասին» օրենքում նախատեսել հսկիչ գնումների միջոցով պետական վերահսկողություն իրականացնելու իրավական հնարավորության առկայություն: Այսինքն, նախագծով Հայաստանի Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի համար ներդրվում են խախտումների բացահատման օրենսդրական գործուն մեխանիզմներ:

Միաժամանակ, Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքի համապատասխան հոդվածներում առաջարկվում է բարձրացնել տուգանքի չափերը:

Նշվածով պայմանավորված՝ նախատեսվում է նաև լրացում կատարել «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում՝ ամրագրելով Հայաստանի

Հանրապետության առողջապահական և աշխատանքի տեսչական մարմնի կողմից իրականացված հսկիչ գնումների արդյունքում ձեռք բերված դեղերը վերադարձնելու հնարավորություն:

2. Նախագծերի փաթեթի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի առողջապահության հարցերի մշտական հանձնաժողովի պատգամավորների կողմից:

3. Ակնկալվող արդյունքը

Նախագծի ընդունման արդյունքում ակնկալվում է հստակեցնել դեղերի իրացման ոլորտում խախտումները բացահայտելու գործընթացը: